

Armenian Charity Runners Team | Yerevan Spring Run

Բարեգործական արշավ ՄՈՒԿ-ով երեխաների համար հատուկ օրթոպեդիկ կոշիկներ գնելու նպատակով

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ՀԱՆԳԱՆԱԿՎԵՑ

2 726 776

ԴՐԱՄ



990 000 դրամ

Երևանյան գարնանային վազքի շրջանակներում **Armenian Charity Runners Team**-ի բարեգործական արշավի նպատակն էր հանգանակել **990 000** դրամ մանկական ուղեղային կաթված ունեցող **33** երեխաների համար հատուկ օրթոպեդիկ կոշիկներ գնելու նպատակով:

Բարեգործական արշավի արդյունքում թիմը հանգանակեց **2 726 776** դրամ.

ԹԻՄԻՆ ՄԻԱՑԱՆ

59

ԲԱՐԵԳՈՐԾ ՎԱԶՈՐԴՆԵՐ

2 թիվ

Բարեգործ վազորդների թիմում ընդգրկվեցին 9 անհատական վազորդներ, **#MamaBalikRun** թիմը **39** մասնակիցներով և **Group 2** թիմը **11** մասնակիցներով: **Group 2** թիմի **4** մասնակիցներ թիմային էստաֆետ վազքում զբաղեցրին առաջին տեղը:



ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵՑԻՆ ԱՎԵԼԻ ՔԱՆ

116

ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ

Բարեգործներ

63 բարեգործ կատարեցին **66** փոխանցում
Яндекс.Деньги համակարգով: **3** բարեգործ գումար
փոխանցեցին "Հայ մայրեր" ՀԿ հաշվեհամարին:
8 բարեգործ **8** նվիրատվություն կատարեցին
Generosity համակարգով: Ավելի քան **10**
բարեգործներ գումարը առձեռն հանձնեցին
վազորդներին (կան խմբային նվիրատվություններ
առանց խմբի մասնակիցների հստակ քանակի):
Թիմը ստացավ **32** բջջային հաղորդագրություն:



ԱՄԵՆԱԽՈՇՈՐ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2 050 \$

ԱՏԱՑՎԵԼ Է **GENEROSITY** ՀԱՄԱԿԱՐԳՈՎ



In memory of Marc Tognozzi

Բարեգործական արշավի վերջին օրը **Sona C Gallatin** անունով բարեգործ **2 050 \$**

սվիրաբերեց **"In memory of Marc Tognozzi"**

մեկնաբանությամբ (Մարկ Տոնոցիի հիշատակին):

Բարեգործին ներգրավել է մեր թիմի նոր վագրոյ.

Նաիրա Մարգարյանը: Այդ գումարը

համապատասխանում է մեր կողմից

հրապարակված նպատակին՝ **990 000** դրամին:



\$2,050

in memory of Marc Tognozzi

ԱՄԵՆԱԿՍԻՎ ԿԱԶՈՐԴԸ ՆԵՐԳՐԱԿԵԼ Է

35

ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐԻ



Ամենաակտիվ վազորդը

Մեր նոր վազորդ Վիլեն Գարամովը հաղթահարեց իր առաջին **10**կմ որպես բարեգործ՝ Երևանյան գարնանային վազքի շրջանակներում, իր ծննդյան օրը: **35** բարեգործներ տարբեր երկրներից աջակցեցին նրան, ինչի շնորհիվ Վիլենը զգալի ներդրում կատարեց՝ **475 800** դրամ: Դա մեր նախնական նպատակի գրեթե կեսն է:

ԻՆՉԻ ՎՐԱ Է ԾԱԽՍՎԵԼՈՒ ՀԱՎԵԼՅԱԼ

1 736 776

ԴՐԱՄԸ

Ինչի վրա է ծախսվելու հավելյալ գումարը

Հավելյալ **1736 766** դրամը ևս կփոխանցվի "Հայ
մայրեր" բարեգործական ՀԿ հատուկ օրթոպեդիկ
կոշիկների գնելու նպատակով:

Ընդհանուր գումարով կկարողանանք **90**
երեխաներին ապահովել մեկական զույգ կոշիկով:





ARMENIAN CHARITY RUNNERS TEAM